



AFIC

ՕՏԱՐԵՐԿՐՅԱՆ ՆԵՐԳՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ

ԺՈՔԸՐ ԵՎ ՄԻՋԻՆ
ՉԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ
ԲԱՐԵԹՈՒՆՈՒՄՆԵՐԻՆ ԸՆԴՍՈՒՄԶ:
ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐ ԵՎ ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐ

ԵՐԵՎԱՆ 2009



AFIC

**ՕՏԱՐԵՐԿՐՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՍՈՑԻԱՑԻԱ**

ՓՈՒՔԻ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՈՂՈՐՏԻ ԲԱՐԵՓՈՆՈՒՄՆԵՐԻՆ

ԸՆԴԱՌԱՋ:

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐ ԵՎ ԱԿՆԿԱՎԻՔՆԵՐ

ԵՐԵՎԱՆ – 2009

ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ Է «ՄԱՍՆԱՎՈՐ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՄԲ



«Օտարերկրյա ներդրումների և համագործակցության ասոցիացիան» (AFIC) ոչ առևտրային, հասարակական կազմակերպություն է, որի գործունեության հիմնական նպատակն է նպաստել և աջակցել Հայաստանում մասնավոր ձեռնարկատիրության և գործարար միությունների զարգացմանը, բարենպաստ և քաղաքակիրթ գործարար միջավայրի ձևավորմանը, օտարերկրյա ներդրումների խթանմանը, միջազգային տնտեսական կապերի և համագործակցության զարգացմանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	4
Փոքր և միջին ձեռնարկատիրությունն այսօր	28
ՓՄՁ հանրության ակնկալիքները և բարեփոխումների ընթացքը	36
Փոքր և միջին ձեռնարկատիրության վաղվա օրը	51
Վերջաբան	65
Հավելված	67

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Հայաստանի մասնավոր հատվածը ընդգրկում է մեծ թվով փոքր և միջին ձեռնարկություններ (ՓՄՁ-ներ) ու գնալով ավելի ու ավելի որոշիչ դեր է խաղում երկրի տնտեսական աճի բարձր տեմպերի ապահովման հարցում: Հայաստանի Կառավարությունը բազմիցս շեշտել է ՓՄՁ-ների դերը երկրի տնտեսության զարգացման, նոր աշխատատեղերի ստեղծման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, հասարակության միջին խավի ձևավորման, երկրում սոցիալական և քաղաքական կայունության ապահովման գործում և շարունակական քայլեր է ձեռնարկում ՓՄՁ պետական աջակցության և դրա զարգացման ուղղությամբ: Հայաստանի Հանրապետությունում կայուն տնտեսական աճի ապահովման քաղաքականության համատեքստում ՓՄՁ զարգացումը կոչված է ապահովելու երկրի տնտեսական աճի կայունությունը՝ տնտեսությանը հաղորդելով նորարարական ուղղվածություն և ճկունություն:

«Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի տվյալներով փոքր և միջին ձեռնարկատիրությունը ներկայումս նշանակալի դեր է խաղում երկրի համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ձևավորման գործում. ըստ 2007 թվականի տվյալների՝ ՓՄՁ-ի տեսակարար կշիռը երկրի

ՀՆԱ-ում կազմել է 41.0%: ՓՄՁ սուբյեկտների հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարումները Հայաստանի Հանրապետության պետական բյուջե կազմել են 127.4 մլրդ դրամ կամ պետական բյուջե վճարված հարկերի 25.2%-ը: ՓՄՁ

սուբյեկտների պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների տեսակարար կշիռը 2007 թվականին կազմել է 38.9 մլրդ դրամ կամ 45.7%: ՓՄՁ ոլորտի մասնաբաժինը երկրի արտահանման մեջ 2007 թվականին կազմել է 17.4%, իսկ ներմուծման մեջ՝ 37.3%:

ՓՄՁ զարգացման միտումները պահպանվել են նաև 2008 թվականին: ՓՄՁ զարգացման և աջակցության համակարգի կայացման ուղղությամբ իրականացված բարեփոխումները հնարավորություն տվեցին ազգային տնտեսություն ներմուծել ՓՄՁ պետական քաղաքականության հետևողական իրագործման համար անհրաժեշտ գրեթե բոլոր հիմնարար սկզբունքներն ու մեխանիզմները: Այս համատեքստում պետական քաղաքականությունն ուղղված է ՓՄՁ զարգացման և օտարերկրյա ներդրումների ներգրավման համար առավել բարենպաստ պայմանների ստեղծմանը, տնտեսության առավել ազատականացմանը, ազատ մրցակցության խթանմանը, վարչարարական ընթացակարգերի պարզեցմանն ու թափանցիկության ապահովմանը:

Սակայն, Հայաստանի ՓՄՁ-ների զարգացման ընթացքը դեռևս հանդիպում է որոշակի խոչընդոտների, որոնք պայմանավորված են և՛ օբյեկտիվ և՛ սուբյեկտիվ գործոններով:

Դրանցից են, մասնավորապես, ՓՄՁ սուբյեկտների համար ֆինանսական (վարկային) միջոցների անմատչելիությունը, գործարար տեղեկատվության և խորհրդատվության ստացման ու կադրերի մասնագիտական ուսուցման հարցերում առկա դժվարությունները, ՓՄՁ սուբյեկտների արտադրանքի (մատուցվող ծառայությունների) դեպի շուկաներ առաջնդման հետ կապված խնդիրները, սկսնակ գործարարների համար ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու հետ կապված գործարար հմտությունների պակասը, ժամանակակից տեխնոլոգիաների և տեղեկատվության անհասանելիությունը և արտաքին տնտեսական կապերի թուլությունը: Առկա հիմնախնդիրների դրսևորումները և սրությունը խիստ տարբերվում են կախված ՓՄՁ սուբյեկտների գործելավայրից (Երևան, ՀՀ այլ մարզեր), հատկապես այդ տարբերությունները կտրուկ են արտահայտվում հեռավոր ու սահմանամերձ բնակավայրերում:

ՓՄՁ զարգացմանը խոչընդոտող օրենսդրական բնույթի հիմնախնդիրները հիմնականում հանգում են ՓՄՁ սուբյեկտների և պետական մարմինների միջև փոխհարաբերություններում դեռևս առկա մի շարք վարչարարական բնույթի խնդիրներին, մասնավորապես՝ կապված տնտեսվարող սուբյեկտների ֆինանսական (հաշվապահական) հաշվետվությունների ներկայացման ընթացակարգերի, տնտեսվարող սուբյեկտներում անհարկի ստուգումներ իրականացնելու հաճախականության փաստերի հետ և այլն:

ՓՄՁ զարգացմանը խոչընդոտող ֆինանսական բնույթի հիմնախնդիրները հանգում են հիմնականում ՓՄՁ սուբյեկտների համար վարկային միջոցներից օգտվելու անհնարինությանը՝ պայմանավորված դրանց կարճաժամկետայնությամբ և այլընտրանքային վարկավորման աղբյուրների բացակայությամբ, ինչպես նաև երկարաժամկետ (3 տարուց ավելի ժամկետով) վարկային ռեսուրսների բացակայությամբ, ինչը լուրջ խնդիր է հատկապես արտադրության ոլորտում, մասնավորապես, արտադրության գիտատար ճյուղերում գործող ՓՄՁ սուբյեկտների համար:

Վերջին տարիներին Հայաստանում իրականացվող ՓՄՁ-ների զարգացմանը ուղղված ծրագրերը հիմնականում կենտրոնանում են վարկավորման խնդրի վրա՝ նվազ ուշադրություն դարձնելով այլ ծառայությունների մատուցմանը, որոնցից առավել կարևորներն են՝ շուկայագիտական աջակցությունը և ինովացիոն տեխնոլոգիաների ներդրմանն օժանդակող ծառայությունները:

Դեպի նոր շուկաներ դուրս գալը, նոր տեխնոլոգիաներից օգտվելը ՓՄՁ-ների միջազգայնացման ներկայիս ժամանակաշրջանում պակաս կարևոր չեն, քան ֆինանսական խնդիրները: Ավելին, փաստերը վկայում են, որ առանձին վերցրած, առանց համապատասխան զարգացումների վարկային միջոցների ներգրավումը՝ ներթափանցումը նոր շուկաներ և ինովացիոն տեխնոլոգիաների ձեռքբերումը, բավարար չէ ՓՄՁ-ների բնականոն զարգացումն ապահովելու համար:

21-րդ դարի շեմին ՓՄՉ-ների առջև ծառայած վերոնշյալ և համանման այլ մարտահրավերները քննարկելու և համապատասխան լուծումներ առաջարկելու նպատակով Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀՁԿ-OECD) նախաձեռնությամբ 2000թ. հունիսին Իտալիայի Բոլոնիա քաղաքում կայացավ մի խորհրդաժողով, որն ընդունեց նոր հազարամյակում ՓՄՉ-ների միջազգային մրցունակության բարձրացմանը նվիրված քաղաքականության հիմնադրույթներն ամփոփող հայեցակարգ, որը հետագայում հայտնի դարձավ որպես ՏՀՁԿ «Բոլոնիայի Խարտիա»: Այն ստորագրեցին կազմակերպության անդամ և ոչ անդամ ավելի քան 50 երկրների կառավարությունների ներկայացուցիչներ՝ նախարարների մակարդակով: 2004թ. հունիսին Ստամբուլում Բոլոնիայի գործընթացի շրջանակներում տեղի ունեցավ հաջորդ նախարարական վեհաժողովը, որտեղ Բոլոնիայի Խարտիայի փաստաթուղթը ստորագրած երկրների կառավարությունների ներկայացուցիչները՝ վերահաստատելով իրենց երկրների նվիրվածությունը Բոլոնիայի Խարտիայի հիմնադրույթներին և Բոլոնիայի գործընթացին: Քննարկեցին ՓՄՉ ոլորտի զարգացման համաշխարհային նոր միտումները և ընդունվեց համապատասխան փաստաթուղթ, որն այժմ հայտնի է որպես Ստամբուլի նախարարական վեհաժողովի Հայտարարագիր: Կարևորելով այն հանգամանքը, որ Բոլոնիայի Խարտիայի գործընթացի շրջանակներում բավականին լուրջ դեր է հատկացվում ՓՄՉ ոլորտում ներգրավված մարդկային ռեսուրսների որակավորման բարձրացմանն ուղղված միջոցառումներին,

Խարտիային միացած երկրների կառավարություններին այդ հարցում գործուն աջակցության մեխանիզմների մշակմանն ու իրականացմանը, Հայտարարագրին միացան նոր երկրներ:

2007թ. հունիսին ՏՀԶԿ նախաձեռնությամբ Ճապոնիայի մայրաքաղաք Տոկիոյում, գործընթացի շրջանակներում կազմակերպվեց հաջորդ խորհրդաժողովը՝ նվիրված ՓՄՁ-ների դերի բարձրացմանը համաշխարհային արժեքային շղթաներում: Օգտվելով նման հեղինակավոր միջազգային կառույցի կողմից նախաձեռնված գործընթացին ինտեգրվելու հնարավորություններից, Տոկիոյի խորհրդաժողովին մասնակցեց Բոլոնիայի գործընթացին միացած ավելի քան 70 երկիր, սակայն անհայտ պատճառներով Հայաստանը դուրս մնաց գործընթացի շրջանակներից:

ՏՀԶԿ-ի նախաձեռնած միջազգային գործընթացին Հայաստանի մասնակցությունը, առավել լայն հնարավորություններ կրնձեռնի ոլորտի հիմնական շահառուների համար և կարևոր դեր կկատարի Հայաստանում ՓՄՁ և մասնավոր հատվածի աջակցման և զարգացման գործում: ՏՀԶԿ նախաձեռնությամբ ընդունված Բոլոնիայի Խարտիային Հայաստանի միանալու հանգամանքը առավել արդյունավետ հնարավորություններ կստեղծի ՓՄՁ ոլորտի զարգացմանն ուղղված պետական քաղաքականության բարեփոխումների խթանման տեսանկյունից, կնպաստի ՓՄՁ ոլորտը կարգավորող իրավական և վարչարարական դաշտի կատարելագործմանը, ՓՄՁ-ների մրցունակության բարձրացմանն ուղղված միջազգային առաջադեմ փորձի և զարգացման

ժամանակակից միտումների ուսումնասիրմանը, վերլուծմանն ու դրանց կիրառմանը:

Հայաստանի ներգրավումը ՓՄՁ ոլորտի զարգացմանն ուղղված պետական քաղաքականության կատարելագործման միջազգային գործընթացներում ոչ միայն կբարձրացնի երկրի վարկանիշը տնտեսական բարեփոխումների իրականացման հետևողականության տեսանկյունից, այլև միաժամանակ լուրջ խթան կհանդիսանա հայկական ՓՄՁ-ների արտադրական կարողությունների զարգացման, ծախսերի նվազեցման, արդյունավետության բարձրացման, շուկաների ընդլայնման, իրացման ծավալների և արտադրողականության բարձրացման գործում: Ընդհանուր տնտեսական աճի ներկայիս պայմաններում Հայաստանի տնտեսվարող սուբյեկտների ընդգրկումը միջազգային տնտեսական և առևտրային համակարգերում նոր հեռանկարներ կարող է ապահովել նաև արտահանման հարցում դժվարություններ կրող հայ փոքր և միջին ձեռնարկատերերին:

Բոլոնիայի գործընթացին Հայաստանի միանալու հանգամանքը կարող է լայն հնարավորություններ ստեղծել ՓՄՁ ոլորտի զարգացմանն ուղղված արդի տեղեկատվական հոսքերի համար, որոնք կարող են հավասարապես օգտակար լինել ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հատվածների համար, նպաստելով նաև «պետական-մասնավոր» սկզբունքով ձևավորված համագործակցությանը:

Հարկային պետական ծառայությունը հանրային այն կառույցներից է, որն ամեն օր շփվում է երկրի քաղաքացիների,

տնտեսվարող սուբյեկտների հետ, իսկ հարկային ծառայողների վարքագիծը և կիրառած վարչարարությունը դիտվում է որպես կառավարության քաղաքականություն:

«Երկրի պետական եկամուտների գերակշիռ մասը կազմում են և առաջիկա տարիներին կկազմեն հարկային եկամուտները: Ջարգացման ներկա փուլում կառավարությունը կարևորում է ինչպես այդ եկամուտների մակարդակը, այնպես էլ դրանց ապահովմանն ուղղված վարչարարության ժամանակակից, անաչառ և հետևողական միջոցառումների իրականացումը», ասվում է 2008թ. մայիսին ՀՀ Կառավարության կողմից հռչակված Հայաստանի հանրապետությունում հարկային վարչարարության յոթ հիմնական նպատակները ներկայացնող փաստաթղթում:

Փաստաթղթի համաձայն հարկային ծառայությունը պետք է նվազեցնի գործարար համայնքի խնդիրները՝ սահմանելով հաշվետվությունների և գրանցումների վարման պարզ և սպառիչ պահանջներ, իրականացնելով սահմանափակ և արդյունավետ ստուգումներ, պայքարելով անազնիվ աշխատողների դեմ և ապահովելով հարկային ծառայության գործունեությանն անհրաժեշտ թափանցիկություն: Հարկային ծառայության այդպիսի աշխատանքը պետք է փոխհատուցի այն դժվարությունները, որ հայաստանյան գործարարն ունի տարածաշրջանում՝ կապված ծախսերի հարաբերականորեն ավելի թանկ լինելու եւ այլ խոչընդոտների հետ:

Այդպիսի խնդիրներ լուծելու համար կպահանջվի ունենալ հարկային վարչարարության հստակ առաքելությամբ

ռազմավարություն, սահմանված նպատակներ ու դրանցից բխող միջոցառումների ծրագիր:

ՀՀ հարկային ծառայության հիմնական առաքելությունը սահմանվում է հետևյալ կերպ. «Կայուն պետական եկամուտների ապահովում՝ «դեմքով դեպի հարկ վճարողը» սկզբունքի գերակայությամբ»:

Հարկային վարչարարության ռազմավարությունը առաջիկա տարիներին հիմնված է լինելու ՀՀ կառավարության 2008-2012թթ. գործունեության ծրագրի, հարկաբյուջետային ոլորտը կարգավորող օրենքների, միջազգային և ՀՀ վերջին տարիների առաջավոր փորձի, հարկերին վերաբերվող դրույթների վրա: Փաստաթուղթը սահմանում է հարկային վարչարարության բարեփոխումների հիմնական ուղղությունները:

Հարկային ծառայությունն իր առաքելության իրացման համար մտադիր է իրականացնել կոնկրետ ծրագրեր, միջոցառումներ, ապահովել դրանց վերահսկողությունը, ակնկալվող արդյունքների գնահատումը և հասարակության իրազեկումը:

Իր առաքելության կենսագործման համար հարկային մարմինը սահմանել է կոնկրետ 7 նպատակ, իսկ ՀՀ կառավարությունը հետամուտ է լինելու հարկային վարչարարության ռազմավարության հետևողական կիրառմանը, այդ նպատակով ստեղծելով ՀՀ վարչապետի ղեկավարությամբ գործող՝ եկամուտների վարչարարության նոր մշակույթի ներդրման բարձրագույն խորհուրդ (ԵՎԲԱԽ), որը կքննարկի ՀՀ հարկային համակարգի բարեփոխումների, վարչարարության զարգացման ուղղությունների,

դրանց ընթացքի ու արդյունքների հարցերը: Հարկային համակարգի նպատակային, իրատեսական և վերահսկելի բարեփոխումները այն կդարձնեն վստահելի, պարզ և մրցունակ, կբարելավեն գործարար միջավայրը, կխթանեն տնտեսական աճը և, որպես հետևանք, կապահովեն հարկային եկամուտների աճ:

Հարկային վարչարարության 7 հիմնական նպատակներն են.

1. Խոշոր բիզնեսի ճիշտ, լիարժեք և ժամանակին հարկման ապահովում.

Խոշոր գործարարների կողմից հարկային պարտավորությունների կատարումը էականորեն կնպաստի ամբողջ հարկային համակարգի կայացմանը: Գործարարի կամ կազմակերպության իրական սեփականատիրոջ կարգավիճակից ու զբաղեցրած դիրքից անկախ, հարկային ծառայությունն իր աշխատանքներում առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնի խոշոր գործարարների համախմբված կապիտալի ու եկամուտների շարժի վերլուծությանը, նրանց հարկային պարտավորությունների ճշգրտմանն ուղղված հսկողական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը:

Ներդրվելու է մեխանիզմ, որը կբացահայտի ու թույլ չի տա, որ կառավարության անդամները, ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներն ու պաշտոնատար բարձր դիրք զբաղեցնող այլ անձինք զբաղվեն գործարարությամբ, այդ թվում՝ միջնորդավորված ձևով:

Խոշոր բիզնեսում, ռիսկայնության բարձր աստիճան հայտնաբերելու պարագայում, օրենքը կպարտադրի միջազգային ստանդարտներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների աուդիտի անցկացում: Պարբերաբար հանրությանը կիրազեկվի խոշոր հարկային իրավախախտումների ու դրանց նկատմամբ կիրառված գործողությունների մասին:

2. Փոքր ձեռներեցության նկատմամբ “փափուկ” հարկային վարչարարության կիրառում:

Փոքր բիզնեսի հարկումը հետապնդում է հարկման արդարացիության ու հավասարության սկզբունքի ապահովում: Օրենքով կսահմանվի փոքր ձեռներեցության հարկման հարաբերականորեն ցածր, բայց արդարացի բեռ, նվազագույնի կհասցվեն ու կպակասեցվեն հաշվետվություններն ու գրանցումները, առավելագույնս կսահմանափակվեն հարկային մարմինների կողմից իրականացվող ստուգումները: Հարկային վարչարարական քայլերը կկապակցվեն փոքր ու միջին ձեռներեցության զարգացումը խթանող ծրագրերի հետ, այդ թվում նպատակ ունենալով խուսափել տարբեր գերատեսչությունների կողմից նույն տնտեսվարողի մոտ վարչական ստուգումների կրկնությունից:

3. Հարկային մարմնում կոռուպցիայի հաղթահարում:

Հարկային ծառայությունում կոռուպցիոն ռիսկերի սահմանափակման, անաչառ և ազնիվ աշխատանքային մթնոլորտի ապահովման նպատակով`

ա) հնարավոր կարճ ժամկետում կվերանայվեն հարկային ծառայողների վարձատրության, պարզևատրման և սոցիալական պաշտպանվածության գործող համակարգերը,

բ) կիրականացվեն հարկային ծառայողների ատեստավորումներ (որպես կանոն՝ գրավոր ձևով), ինչը հնարավորություն կտա ձեռքագատվել ոչ արհեստավարժ հարկային ծառայողներից: Ատեստավորման հանձնաժողովը կարող է լինել միջգերատեսչական բնույթի: Համակարգը կհամալրվի երիտասարդ, թարմ ներուժով,

գ) կներդրվի հարկային ծառայողների պարտադիր ուսուցման, վերապատրաստման և պաշտոնական առաջխաղացման ծրագիր,

դ) համապատասխան ուղեցույցների և ձեռնարկների միջոցով կապահովվի հարկային վարչարարության ընթացակարգերի միատեսակ կիրառումը բոլոր հարկ վճարողների նկատմամբ և բոլոր հարկային ծառայողների կողմից,

ե) հարկային ծառայողի համար վարքագծի կանոնների պահպանումը կդառնա նրա աշխատանքի գնահատման ցուցանիշներից մեկը, հարկային ծառայությունում կուժեղացվի ներքին աուդիտի գործառույթը և սեփական անձնակազմի նկատմամբ ներքին հետաքննությունների անցկացման արդյունավետությունը,

զ) կվերանայվեն ու կպարզեցվեն հարկային ծառայության պաշտոնատար անձանց գործողությունների գանգատ-բողոքների քննության ընթացակարգերը և կապահովվի արդյունքների թափանցիկությունը: Այդ նպատակով կգործարկվի նաև այլ գործիք՝

«Քեժ գիծ», որը հնարավորություն կտա դասակարգել ու օգտագործել ստացված տեղեկատվությունը և որի արդյունքային հաշվետվությունը պարբերաբար կներկայացվի ԵՎԲԱԽ-ին ու հանրությանը:

4. Հարկային պարտավորությունների կամավոր վճարման (ինքնագնահատման) սկզբունքի ներդրում.

Հարկային հաշվետվություններ ընդունելիս էականորեն կնվազեցվի հարկային ծառայող-հարկ վճարող շփումը: Մեկ տարուց ոչ ուշ հաշվետվությունները, որպես կանոն, կընդունվեն սովորական կամ էլեկտրոնային փոստով: Հարկ վճարողների և հարկային մարմինների իրավունքների պաշտպանության նպատակով կսկսվեն օրենքով կարգավորվել հարկային մարմնի կողմից երրորդ անձանցից տեղեկություններ ստանալու ու տրամադրելու, հարկային մարմնում կուտակվող տեղեկությունների օգտագործման, ինչպես նաև եկամուտներ չհայտարարագրած կամ թերհայտարարագրած անձանց բացահայտելու հարցերը:

Հարկային ծառայությունը էականորեն բարելավելու է հարկ վճարողներին հարկային օրենքների կիրառման մասին պարզաբանումների տրամադրման մեխանիզմները, ծավալները: Բազմազանվելու, որակապես փոխվելու ու աճելու են հարկ վճարողներին իրազեկման ու այլ ծառայությունների շրջանակները: Առաջիկա տարում կներդրվի հարկ վճարողներին ծանուցումների ներկայացման ավտոմատ ծրագիր: Հարկային ծառայությունը կապահովի իր աշխատանքների առավելագույն թափանցիկություն՝

հրապարակելով իր ծրագրերը, աշխատանքի արդյունքները, ընթացքի վերաբերյալ հաշվետվությունները:

5. Հարկային ստուգումների նոր քաղաքականություն.

Համատարած կասկածամտության և յուրաքանչյուր հարկ վճարողի մեջ պոտենցիալ հարկից խուսափող տեսնելու պրակտիկան կփոխարինվի վերլուծությունների և ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգով:

Այս նպատակով կիրականացվեն անհրաժեշտ կառուցվածքային, կադրային և ուսումնական միջոցառումներ՝ նոր համակարգի փորձնական կիրառման և արդյունքների տարածման իրականացման համար:

2009 թվականից կիրականացվի հարկման տեսանկյունից ռիսկային ոլորտների, կարևորագույն ապրանքատեսակների և առանձին հարկ վճարողների մշտական վերահսկում: 2010թ. կունենանք բարեխիղճ հարկ վճարողների ընտրության ու նրանց նկատմամբ թեթևացված հարկային վարչարարության հստակ ու գործողության մեջ դրված մեխանիզմ: ԵՎԲԱԽ-ը առաջիկա վեց ամիսների ընթացքում կքննարկի.

ա) հարկային ստուգումների ազգային ծրագիրը: Շինարարության, էլեկտրաէներգիայի, գազի, լեռնահանքային արդյունաբերության, ջրային տնտեսության, առևտրի և այլ կարևոր դասակարգվող ոլորտներում ստեղծվելու են առանձին ենթածրագրեր,

բ) գերավճարների, մեծ չափի հարկային վնասների, ապառքների նվազեցմանն ուղղված միջոցառումները,

գ) իրավասու պետական մարմինների հետ վարչական համագործակցության և փոխաջակցության աշխատանքային ծրագիրը:

Կվերակառուցվեն հարկային մարմնի օպերատիվ հետախուզության, հետաքննության և քննչական ստորաբաժանումների աշխատանքները՝ դրանք դարձնելով ծրագրային, նպատակային և օրենքի սահմաններում թափանցիկ:

6. Հարկային մարմնի կառավարման նոր սխեմա.

Կիրականացվեն հետևյալ առուցվածքային բարեփոխումները.

ա) հարկային ծառայության գլխավոր գրասենյակում կներդրվի գործառույթների վրա հիմնված կառուցվածք, որը հնարավորություն կտա կառավարման ուղիներում ունենալ հստակություն ու խուսափել կրկնություններից,

բ) կվերակառուցվեն խոշոր հարկ վճարողների և ոլորտային տեսչությունները՝ ուժեղացնելով գործառութային և ոլորտային հսկողությունը,

գ) կկրճատվի գործող հարկային տեսչությունների թիվը՝ բարելավելով դրանց կառուցվածքը, զարգացնելով հարկ վճարողների սպասարկման գործառույթները:

Կառուցվածքի էական առանձնահատկությունն է լինելու միասնական ընթացակարգերի ձևավորումը գլխավոր

գրասենյակում, հարկային տեսչությունների հստակ լիազորումը տեղերում և ժամանակակից հսկողական գործիքների ներդրումը:

Կառուցվածքում նախատեսվում է ունենալ տվյալների մշակման մինչև 5 կենտրոններ, տեղաբաշխված Երևանում և մարզերում: Դրանց հիմնական խնդիրն է լինելու հարկ վճարողի կողմից ներկայացված հաշվետվությունների ընդունումը և մշակումը՝ աշխատելով համընդհանուր համակարգչային տվյալների բազայում:

Կառուցվածքում նախատեսվում է ունենալ հարկ վճարողների սպասարկման կենտրոններ: Դրանց հիմնական խնդիրն է լինելու հարկային օրենքների կիրառման վերաբերյալ պարզաբանումները և իրազեկումը: Քաղաքականությունը լինելու է այն, որ առաջին շրջանում, մինչև տեխնիկապես համարված սպասարկման կենտրոնների գործարկումը, պարզաբանումները տրվեն հարկային ծառայության գլխավոր գրասենյակի կողմից, իսկ իրազեկման աշխատանքները իրականացվեն հարկային տեսչությունների կողմից:

7. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացում.

Սա ենթադրում է նոր գործիքների ընդգրկում, աշխատանք միայն օրինական (լիցենզավորված) համակարգչային ծրագրերով, համակարգի ամբողջականության և անվտանգության ապահովում: Դա վերաբերվելու է հատկապես հարկ վճարողների տվյալների համընդհանուր համակարգչային բազայի կառավարմանը, ներառելով.

ա) հարկ վճարողների մասին օրենքով սահմանված բոլոր տեղեկությունների ամբողջական (հիմնական) շտեմարանի վարումը,

բ) համակարգչային տեխնիկայի և ծրագրային ապահովման հարցերը,

գ) հարկ վճարողների մասին արտաքին և ներքին տեղեկատվության, հաշվետվությունների ընդունման և մշակման միասնական էլեկտրոնային համակարգը, գործերի ավտոմատ հսկողությունը:

Ներկայացված նպատակներից ելնելով ՀՀ կառավարությունը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. նոյեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ. գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» թիվ 1440 և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2008թ. ապրիլի 11-ի 188-Ա որոշումների, ինչպես նաև ի նկատի ունենալով փոքր ձեռնարկատիրական գործունեության ոլորտում հարկային օրենսդրության և վարչարարության կատարելագործման անհրաժեշտությունը, հանդես եկավ օրենսդրական փոփոխությունների նախաձեռնությամբ, որի նպատակն էր կարգավորել տնտեսությունում առկա հարկային օրենսդրական թերություններն ու բացթողումները:

Խնդիրները, որոնց անդրադարձան առաջարկվող օրենսդրական փոփոխությունները հետևյալն էին.

1. Տնտեսությունում կատարվող ապրանքաշրջանառության մեջ մեծ տեսակարար կշիռ ունեն առանց փաստաթղթերի ապրանքների

մատակարարման, ծառայությունների մատուցման և աշխատանքների կատարման գործարքները, ինչը պայմանավորված է օրենսդրական դաշտում փաստաթղթաշրջանառությունը կարգավորող նորմերի անկատարությամբ: Փաստաթղթաշրջանառության հետ կապված հիմնախնդիրների խորացմանը նպաստում է նաև առևտրային կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից հաշվարկային փաստաթուղթ դուրս գրելու տնտեսական խթանների ու, միևնույն ժամանակ, փաստաթուղթ դուրս չգրելու դեպքերում խիստ պատժամիջոցների բացակայությունը, ինչպես նաև գործարքների կատարման փաստն ապացուցելու մեխանիզմների թերի լինելը:

2. Համաձայն գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի՝ ավելացված արժեքի հարկ վճարողներ էին համարվում ինքնուրույն ձեռնարկատիրական գործունեություն վարող և ավելացված արժեքի հարկով հարկվող գործարքներ իրականացնող անձինք, եթե նրանք օրենքով սահմանված կարգով չեն համարվում պարզեցված հարկ կամ հաստատագրված վճար վճարողներ: Խնդիրը կայանում էր նրանում, որ 2008թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած օրենսդրական փոփոխությունների հետևանքով նախկինում պարզեցված հարկի դաշտում գործող հարկ վճարողների մի զգալի հատված տեղափոխվեց հարկման ընդհանուր դաշտ:

Այդ օրենսդրական փոփոխությունները տնտեսվարող սուբյեկտների մոտ հանգեցրին հարկային բեռի կտրուկ ավելացման՝ կապված ձեռքբերումները հիմնավորող փաստաթղթերի ապահովման, ապրանքային մնացորդների իրացման, ինչպես նաև

կանխիկ վճարումների ձևով կատարված ծախսերում ներառված ավելացված արժեքի հարկի գումարների հաշվանցման իրավունք չունենալու հետ: Վերոնշյալ օրենսդրական փոփոխությունները հանգեցրեցին նաև հարկերի հաշվարկման, հաշվետվությունների կազմման և դրանց օրենքով սահմանված ժամկետներում ներկայացման դժվարությունների:

3. Գործող «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքը իրացման շրջանառության փոքր ծավալներ ունեցող հարկ վճարողների համար շահութահարկի հաշվարկման, ինչպես նաև հաշվետվությունների ներկայացման առումով տարբերակված մոտեցումներ չէր սահմանում: Այն նման հարկ վճարողների համար հաշվապահական հաշվառման վարման առումով նույնպես առանձնահատկություններ չէր նախատեսում, ինչը հարկատուներից լրացուցիչ ֆինանսական ծախսեր էր պահանջում շահութահարկը հաշվարկելու համար:

4. Գործող «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքը իրացման շրջանառության փոքր ծավալներ ունեցող անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի հաշվարկման, ինչպես նաև հաշվետվությունների ներկայացման առումով տարբերակված մոտեցումներ չէր սահմանում, ինչը հարկատուներից լրացուցիչ ֆինանսական ծախսեր էր պահանջում եկամտահարկը հաշվարկելու համար:

5. 2008թ. սկզբից պարզեցված հարկի դաշտից դուրս էր եկել իրացման շրջանառության ոչ մեծ ծավալներ ունեցող հարկ վճարողների մի մեծ զանգված, և այս հարկատեսակը շարունակում էր գործել հիմնականում առևտրական գործունեության և

կենցաղային ոլորտում: Փոփոխության նպատակն էր՝ կարգավորել պարզեցված հարկման դաշտից դուրս մնացած հարկ վճարողների հարկային բեռի և հարկի հաշվարկման բարդությունների հետ կապված հարցերը և այլ փոքր հարկ վճարողների համեմատությամբ ձևավորել հարկման համահավասար պայմաններ:

6. Գործող «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի համաձայն բոլոր անհատ ձեռնարկատերերը պարտադիր սոցիալական ապահովության վճարները հաշվարկում և վճարում էին միևնույն ընթացակարգով:

Փորձը ցույց էր տվել, որ իրացման ոչ մեծ ծավալներ ունեցող անհատ ձեռնարկատերերի համար սոցիալական վճարի դրույքաչափերը բարձր էին, ինչը հանգեցրել էր բավականին թվով անհատ ձեռնարկատերերի գործունեության դադարեցման:

7. Գործող «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի համաձայն, հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման և հսկիչ-դրամարկղային մեքենաների միջոցով դրամական հաշվարկների կանոնները չպահպանելու համար նախատեսված էին համեմատաբար մեղմ պատասխանատվության միջոցներ, որոնց կիրառմամբ հնարավոր չէր արդյունավետ վերահսկողություն սահմանել հարկ վճարողների կողմից կանոնների պահպանման ուղղությամբ:

8. Գործող «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի համաձայն 2003-2005թթ. համար հաշվարկված և չվճարված եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների

նվազագույն գումարների, ինչպես նաև դրանց նկատմամբ հաշվարկված և չվճարված տույժերի վճարումից ազատելու արտոնությունը տարածվում էր միայն մինչև 2006 թվականի մայիսի 1-ը հարկային մարմին գործունեությունը դադարեցնելու վերաբերյալ գրավոր դիմում ներկայացրած և պետական գրանցման վկայականը հանձնած անհատ ձեռնարկատերերի վրա:

9. Գործող «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի գործողությունը տարածվում էր բոլոր կազմակերպությունների վրա: Խնդիրն այն էր, որ փոքր սուբյեկտների կողմից գործող հաշվապահական հաշվառման ստանդարտների հիման վրա հաշվապահական հաշվառում վարելը դժվար իրագործելի է, քանի որ այն պահանջում է մասնագիտական գիտելիքների բավարար մակարդակ ունեցող կադրերի ներգրավում, հետևաբար նաև լրացուցիչ վարչական ծախսեր:

Առաջարկվող օրենսդրական փոփոխությունների փաթեթի նախագիծը ներկայացվեց քաղաքացիական հասարակության շահագրգիռ կառույցների, այդ թվում նաև հասարակական կազմակերպությունների քննարկմանը: Հանրային ակտիվ քննարկումների արդյունքում ձևավորված օրենսդրական փոփոխությունների փաթեթը ներկայացվեց և ընդունվեց Ազգային ժողովի օգոստոսի 19-ին հրավիրված արտահերթ նիստում: Վերը նկարագրած օրենքների փոփոխությունները, բացառությամբ «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքով սահմանված արտոնությունների կիրառման մասին» և «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ

օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքներից, որոնք ուժի մեջ են մտել պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, ուժի մեջ պիտի մտնեն 2009 թվականի հունվարի 1-ից:

«Օտարերկրյա ներդրումների և համագործակցության ասոցիացիա» (ՕՆՀԱ) հասարակական կազմակերպությունը, կարևորելով մասնավոր ձեռնարկատիրության զարգացմանը նպաստող ներկայիս բարեփոխումների հետևողական իրականացման անհրաժեշտությունը, հավատարիմ մնալով մասնավոր ձեռնարկատիրության շահերի պաշտպանը լինելու իր առաքելությանը, հետամուտ լինելով ոլորտը կարգավորող քաղաքականության մշակման ու իրականացման գործում իր ներդրումն ունենալու նպատակին, 2008թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին նախաձեռնեց և իրականացրեց մի ծրագիր, որի նպատակն էր.

- բացահայտել գործարար հանրության կողմից մասնավոր ձեռնարկատիրության զարգացման ճանապարհին առկա խոչընդոտներն ու հիմնախնդիրները,
- բացահայտել առկա խոչընդոտների և հիմնախնդիրների վերացմանն ուղղված պետական քաղաքականությունից մասնավոր ձեռնարկատիրության ակնկալիքները,
- իրազեկել գործարար հանրությանը վերը նշված խնդիրների լուծմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների մասին,

- համադրել գործարար հանրության ակնկալիքները ընթացող բարեփոխումների ներկայիս և սպասվող արդյունքների հետ,
- վեր հանել ոլորտը կարգավորող քաղաքականության մեջ դեռևս բաց մնացած խնդիրները,
- մոբիլիզացնել գործարար հանրությանը՝ մասնավոր ձեռնարկատիրության զարգացմանն ուղղված պետական քաղաքականության ձևավորման մեջ ակտիվ մասնակցություն ունենալու նպատակով:

Նշված խնդիրների լուծման համար ՕՆՀԱ-ն հարցում իրականացրեց Երևանում (51), Գեղարքունիքի (44), Տավուշի (28) և Վայոց Ձորի (28) մարզերի՝ ընդհանուր թվով 150 գործող մասնավոր ձեռնարկությունների ներկայացուցիչների շրջանում: Ստորև բերված նյութը ամփոփում է հարցման արդյունքների վերլուծությունը, ձեռնարկատիրության ներկայացուցիչների դիրքորոշումն ու կարծիքը՝ համադրելով ոլորտում ներկայումս ընթացող և մոտակա տարիներին սպասվող բարեփոխումների, ոլորտը կարգավորող պետական քաղաքականության կատարելագործման հեռանկարի հետ:

Մասնավոր ձեռնարկատիրության ներկայացուցիչներին տրված հարցերը ամփոփված են Հավելվածի հարցաշարում.

«Փոքր եւ միջին ձեռնարկատիրությունն այսօր» և «ՓՄՁ հանրության ակնկալիքները և բարեփոխումների ընթացքը» վերնագրերի տակ ամփոփված են հարցման արդյունքները և ձեռնարկատիրության ներկայացուցիչների կողմից ընթացող

բարեփոխումների մասին կարծիքը, ընկալումն ու դրանց նկատմամբ դիրքորոշումը:

«Փոքր եւ միջին ձեռնարկատիրության վաղվա օրը» վերնագրի ներքո ներկայացված են ոլորտի զարգացմանն ուղղված ՀՀ Կառավարության ծրագրի դրույթները, ՀՀ Էկոնոմիկայի նախարարության «Հայաստանի գործարար և ներդրումային միջավայրի «Գերազանցության կենտրոն» համազգային նախագիծ» հայեցակարգը, ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության հարկային վարչարարության ռազմավարության 2008-2011թթ. ծրագիրը», ձեռնարկատիպական գործունեության ոլորտում հարկային վարչարարության կատարելագործմանն ուղղված բարեփոխումների փաթեթի բովանդակությունը և իրականացված միջոցառումները, ինչպես նաև «Հայաստանի տնտեսությունում փաստաթղթաշրջանառության խնդիրները» հետազոտության արդյունքները՝ ձեռնարկատիրության ներկայացուցիչների ակնկալիքների հետ համադրված:


Բոլոր վերը թվարկված փաստաթղթերը ներկայացված են եղել հանրային քննարկման և «Օտարերկրյա ներդրումների և համագործակցության ասոցիացիան» իր ակտիվ մասնակցությունն է բերել դրանց լրամշակմանը՝ անելով բազմաթիվ դիտողություններ, առաջարկություններ և լրացումներ: Գոհունակությամբ պետք է նշենք, որ այդ առաջարկությունների, դիտողությունների և լրացումների զգալի մասը փաստաթղթերի վերջնական տարբերակը մշակելիս հաշվի են առնվել:

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ
ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՍՕՐ

Երևանում (51), Գեղարքունիքի (44), Տավուշի (28) և Վայոց Ձորի (28) մարզերում, ընդհանուր թվով 150 գործող մասնավոր ձեռնարկությունների ներկայացուցիչների շրջանում հարցման արդյունքները ամփոփող ստորև բերված նյութը թույլ է տալիս պատկերացում կազմել Հայաստանում փոքր եւ միջին ձեռնարկատիրության ներկայիս օրվա ընկալման, մասնավոր ձեռնարկատիրության ոլորտում ներկայումս ընթացող և հետագայում սպասվող բարեփոխումների վերաբերյալ կարծիքների, դիրքորոշումների ու ակնկալիքների մասին:

Մասնավոր ձեռնարկատիրության ներկայացուցիչներին տրված հարցերը ամփոփված են Հավելվածում բերված հարցաշարում:


Երկրում մասնավոր ձեռնարկատիրության զարգացման աստիճանը բավարար է գնահատում հարցման մասնակիցների 40%-ը, մինչդեռ 48%-ը այն գնահատում է անբավարար:



Գծապատկեր 1. Երկրում մասնավոր ձեռնարկատիրության զարգացման աստիճանը


Պետական կառավարման մարմինների կողմից տնտեսության մասնավոր հատվածին տրամադրվող օժանդակությունը բարձր է գնահատել հարցման մասնակիցների մոտ 1%-ը (2 մասնակից): Գրեթե հավասար են բաշխվել հարցման մասնակիցների ձայները «որոշ չափով են օգնում» և «անտարբեր են» պատասխանների միջև (համապատասխանաբար 29% և 31%):

Ըստ հարցման մասնակիցների 24%-ի՝ պետական կառավարման մարմինները չեն օգնում, իսկ 13%-ի կարծիքով նույնիսկ խոչընդոտում են ոլորտի զարգացմանը:




Գծապատկեր 2. Մասնավոր հատվածին տրամադրվող օժանդակության գնահատականը

Այդուհանդերձ, հարցման մասնակիցների 16%-ը պետական կառույցների ծառայությունների մատուցումը գնահատում է որպես արդյունավետ, իսկ 55%-ը՝ անարդյունավետ:



Գ-ծապատկեր 3. Պետական կառույցների ծառայությունների մատուցման գնահատականը

Հարցման մասնակիցների մեծամասնության կարծիքով մասնավոր ձեռնարկությունների մոտ 50%-ը պետական կառույցների, կանոնակարգերի և վարչարարության հետ առնչվող խնդիրների առաջացման դեպքում ապավինում են «տանիքի» ծառայություններին:



Գծապատկեր 4. «Տանիքի» ծառայություններին ապավինող ձեռնարկությունների թիվը

Արդի պայմաններում մասնավոր ձեռնարկատիրության զարգացումը խոչընդոտող հիմնական գործոնները հարցման մասնակիցները դասակարգել են հետևյալ ձևով.

1.	Հարկային բեռը, բարդ հարկային համակարգը (78 %)
2.	Կոռուպցիան պետական հատվածում (67 %)

3.	Անբավարար պետական աջակցությունը (49 %)
4.	Օրենսդրության հաճախակի և անհետևողական փոփոխությունները (44 %)
5.	Վարչարարական շարաշահումները (43 %)
6.	Վարկերի դժվար մատչելիությունը (36 %)
7.	Սեփականատիրական իրավունքի պաշտպանված չլինելը (29 %)
8.	Դատաիրավական համակարգի անկատարությունը (24 %)
9.	Թույլտվությունների և լիցենզիաների ստացման կարգը (20 %)
10.	Ձեռնարկության հիմնադրման կարգը (8 %):

Աղյուսակ 1. Մասնավոր ձեռնարկատիրության զարգացումը խոչընդոտող հիմնական գործոնների դասակարգումը ըստ կարևորության


Հարցման մասնակիցները ոլորտի զարգացումը ապահովող պետական քաղաքականության խնդիրները ըստ կարևորության դասակարգել են հետևյալն կերպ.

1.	Կոռուպցիա (71 %)
2.	Գների անկայունություն, արժեզրկում (67 %)
3.	Արժույթի փոխարժեքի տատանումներ (65 %)
4.	Հարկեր և հարկային վարչարարություն (62 %)

5.	Պետական կամ մասնավոր ձեռնարկությունների կողմից ոչ մրցակցային գործելակերպ (38 %)
6.	Արդարադատության համակարգի անկատարություն (31 %)
7.	Ֆինանսավորման մեխանիզմների անկատարություն (30 %)
8.	Տնտեսական բարեփոխումների իրականացման ընթացք (27 %)
9.	Գործարարության կանոնակարգման և վարչարարության անկատարություն (27 %)
10.	Ենթակառուցվածքների (հեռախոս, էլեկտր., ջուր, ճանապարհներ) անբավարար վիճակ (19 %)

**Աղյուսակ 2. Ոլորտում պետական քաղաքականության
խնդիրների դասակարգումը ըստ կարևորության**

Մասնավոր ձեռնարկատիրության ոլորտում բարեփոխումները անհրաժեշտ կամ նույնիսկ խիստ անհրաժեշտ են հարցման մասնակիցների 98%-ի կարծիքով: Հարցման մասնակիցներից միայն երեքն են գտնում, որ ոլորտում անելիք չկա, կամ էլ նման ջանքերն ապարդյուն կլինեն:




Գծապատկեր 5. Մասնավոր ձեռնարկատիրության ոլորտում բարեփոխումների անհրաժեշտության գնահատականը

ՓՄՁ ՀԱՆՐԱՌՅԱՆ ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐԸ ԵՎ ԲԱՐԵՓՈՒՆՈՄՆԵՐԻ ԸՆԹԱՑՔԸ

Տնտեսական զարգացման ներկա փուլում խիստ կարևորվում է այնպիսի հարկային քաղաքականության ձևավորումն ու իրականացումը, որը հնարավորություն կտա տնտեսվարողների համար ստեղծել արդար և հավասար պայմաններ, կրճատել ստվերային տնտեսության ծավալները, նվազեցնել կոռուպցիոն ռիսկերը և հետագա տնտեսական զարգացման համար ապահովել նպաստավոր պայմաններ: Նման քաղաքականության ձևավորման և արդյունավետ իրականացման համար ճակատագրական է պետության և տնտեսվարող սուբյեկտների միջև փոխվստահության, առողջ երկխոսության և համագործակցության մթնոլորտի ձևավորումը: Այն իրապես հնարավորություն կտա, առանց պետական բյուջեի կատարման խնդրի լուծումը վտանգելու, իրականացնել մասնավոր ձեռնարկատիրության զարգացումը խթանող օրենսդրական և վարչարարական բարեփոխումներ:

Պետության կողմից տնտեսական բարեփոխումների խթանում են ակնկալում հարցման մասնակիցների 37%-ը: 21%-ը նման ակնկալիքներ չունեն, իսկ 24%-ը գերադասում են գուշակություն չանել:



Գծապատկեր 6. Պետության կողմից տնտեսական բարեփոխումների խթանման անհրաժեշտության աստիճանի գնահատականը

Հարցման մասնակիցների կարծիքների համաձայն, ակնկալվող առաջնահերթ ոլորտային բարեփոխումների ցանկը հետևյալն է.

1. կոռուպցիայի դեմ պայքար (32 %),
2. տնտեսական օրենսդրության կատարելագործում (31 %),

3. համայնքների համաչափ տնտեսական զարգացում (21 %),
4. վարչարարության կատարելագործմանն ուղղված բարեփոխումներ (17 %),
5. ներդրումների խթանում (15 %),

Հատուկ հետաքրքրություն են ներկայացնում տնտեսական բարեփոխումների խթանմանն ուղղված հարցման մասնակիցների առաջարկություններն ու դիտարկումները:

Հարցման մասնակիցների համոզմամբ փոքր և միջին ձեռնարկությունների համար պետական աջակցությունն ու հովանավորությունը կենսական անհրաժեշտություն են: Փոքր և հատկապես նորաստեղծ ձեռնարկությունները մինչև հուսալի և կարող հարկատու դառնալը պետության լուրջ աջակցության կարիքն ունեն:

Խիստ հասցեական և արդյունավետ պետական աջակցության խնդրի լուծման ճանապարհին, նախ և առաջ, անհրաժեշտ է տնտեսվարող սուբյեկտների բազմությունից հստակ սահմանազատել փոքր և միջին ձեռնարկատիրությունը: Այդ նպատակով պահանջվում է վերանայել 2000թ-ից գործող «ՓՄՁ պետական աջակցության մասին» օրենքը, տալով տնտեսվարող սուբյեկտների հստակ դասակարգումը՝ ելնելով ոչ միայն աշխատողների թվաքանակից, ինչպես դա անում է գործող օրենքը, այլ հաշվի առնելով նաև կազմակերպության, օրինակ, տարեկան շրջանառության ծավալը:

Հարցման մասնակիցները վկայում են սովերային տնտեսության տարածված լինելու մասին և, որպես հիմնական պատճառ, հիշատակում հարկային օրենսդրության անկատարությունը, դրա խրթին լինելը, ներքին հակասականությունը և հաճախակի փոփոխությունները: Հարցման մասնակիցներից ոմանք գտնում են, որ ՀՀ-ում գործող օրենքները այնքան վատը չեն, որքան ցածր է վարչարարության որակը: Արդյունքում օրենքներն ըստ էության չեն գործում: Հարկային բարեփոխումների արդյունքում պետք է հասնել նրան, որ ուշադրության կենտրոնում լինի ոչ թե հարկահավաքը, այլ հարկատուն:

Պետք է բարձրացնել փոքր և միջին բիզնեսի ոլորտում գործող ձեռնարկատերերի անբարեխիղճ վարչարարության դեմ պաշտպանվածության աստիճանը, խիստ պարզեցնել հարկային օրենսդրությունը, թեթևացնել հարկային բեռը, ստեղծել պարզ աշխատատեղ՝ օրենքը պետք է գործի բոլորի համար:

Հարցման մասնակիցները այն կարծիքին են, որ անհրաժեշտ է սկսնակ փոքր և միջին բիզնեսներին, մինչև շուկայում իրենց տեղը գտնելն ու հաստատվելը, տալ հարկային արտոնություններ, օրինակ՝ բարեխիղճ մշտական ներկրողների համար մաքսակետերում սահմանել մաքսային արժեքի 2-5%-ի չափով զեղչ:

Մեծապես կարևորվում է պետության հովանու ներքո գործող տեղեկատվության տարածման այնպիսի համակարգի ձևավորումը, որը յուրաքանչյուր, և հատկապես, սկսնակ գործարարին թույլ կտա քաջածանոթ լինել ՀՀ-ում գործող տնտեսական օրենսդրությանը,

դրա հաճախակի փոփոխություններին և այդպիսով կնպաստի և՛ կոռուպցիայի կրճատմանը և՛ ստվերի նվազեցմանը:

Համաձայն հարցման մասնակիցների կարծիքի ՀՀ-ի տնտեսության համար ամենակարևորը աշխատատեղերի ստեղծման խնդիրն է: Եթե տնտեսական քաղաքականությունը կնպաստի աշխատատեղերի ստեղծմանը, բնակչությունը կունենա եկամուտ, ուստի և՛ արժանապատիվ ապրելու և՛ պետքություն լցնելու միջոց: Դրան կնպաստի նաև օտարերկրյա ներդրումները խթանող ծրագրերի մշակումը, հատկապես՝ արտադրության և գյուղատնտեսության ոլորտներում:

Հարցման մասնակիցների կարծիքով ՀՀ-ի համար այսօր խիստ կարևոր խնդիր է կոռուպցիայի կրճատումը՝ հատկապես պետական հատվածում: Դա այն հիմնական խոչընդոտներից է, որը արգելակում է երկրի դինամիկ զարգացմանը բոլոր ոլորտներում:

Երկրի տնտեսության զարգացումը խթանող միջոցառումների շարքում հիշատակվել է փոքր բիզնեսի միջին և խոշոր ձեռնարկությունների հետ համագործակցության համար բարենպաստ միջավայրի ձևավորումը:

Այսօր փոքր և միջին, հատկապես նորաստեղծ, բիզնեսը վարկավորման պարզ ու մատչելի մեխանիզմ ձևավորելու կարիք ունի: Հարցման մասնակիցների կարծիքով նման մեխանիզմի ձևավորման գործում մեծ է պետության դերը: Մեծ դեր ունի պետությունը նաև արդար մրցակցային դաշտի ձևավորման գործում:

Մեծ թվով մասնակիցներ շեշտադրում են Երևանից դուրս տարածքների համաչափ տնտեսական զարգացման համար պայմանների ստեղծման անհրաժեշտությունը:

ՀՀ նախագահական ընտրություններ 2008-ի նախօրեին «Օտարերկրյա ներդրումների և համագործակցության ասոցիացիա» և «Փոքր և միջին բիզնեսի հիմնադրամ» ոչ առևտրային կազմակերպությունները Երևանում, Գեղարքունիքի, Տավուշի, Վայոց Ձորի մարզերի մասնավոր ձեռնարկատիրության երեք և կես հարյուրից ավելի ներկայացուցիչների շրջանում անցկացրած հարցման արդյունքները ամփոփող հանգուցային հիմնահարցերի շարքը, որպես ՓՄՁ ոլորտի ներկայացուցիչների պատգամ, ներկայացրեցին նախագահության թեկնածուներին, խնդրելով արտահայտել իրենց դիրքորոշումը վերոհիշյալ հիմնախնդիրների վերաբերյալ՝ գնահատելու համար դրանց լուծմանն ուղղված մասնավոր հատվածի և իշխանության գործադիր թևի միջև հետագա կառուցողական համագործակցության հեռանկարը:

Նախագահության թեկնածուները կարևորեցին մասնավոր ձեռնարկատիրության ոլորտի դերը երկրի տնտեսական և սոցիալական զարգացման, հատկապես նոր աշխատատեղերի ստեղծման և աղքատության կրճատման գործում: Նրանք համաձայն էին հարցման մասնակիցների մեծամասնության այն կարծիքի հետ, որ երկրում մասնավոր ձեռնարկատիրության ոլորտի զարգացման աստիճանը դեռևս բավարար չէ և մասնավոր ձեռնարկատիրության ոլորտում բարեփոխումների իրականացումը խիստ կարևոր խնդիր է: Համակարծիք էին նաև այն մտքի հետ, որ

ձեռնարկատիրության պետական աջակցության համակարգի արդյունավետությունը դեռևս ցածր է: Նախագահության թեկնածուների մեծ մասի կարծիքով ևս ձեռնարկությունների 50%-ը հարկերի, ընթացակարգերի և վարչարարության հետ առնչվող խնդիրները լուծելու համար օգտվում են «տանիքի» ծառայություններից:

Նախագահության թեկնածուները համաձայն էին հարցման մասնակից փոքր և միջին ձեռնարկատիրության ներկայացուցիչների ոլորտի բարեփոխումներին ուղղված հետևյալ միջոցառումների անհրաժեշտության հետ.

- փոքր և միջին ձեռներեցության խթանում իշխանության բոլոր մակարդակներում,
- փոքր և միջին ձեռնարկատիրության անբարեխիղճ վարչարարության դեմ պաշտպանվածության մեխանիզմների մշակում ու ներդրում,
- սկսնակ փոքր և միջին ձեռնարկատիրության հանդեպ հատուկ պետական հոգածություն և աջակցություն:

ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության 2008-2010թթ. ռազմավարության հիմքում դրված նպատակներն են.

1. Հասարակության համար ընկալելի տնտեսական քաղաքականության իրականացում: Մասնավորապես, նպատակին հասնելու համար նախատեսվում է.

- սահմանել հասարակության և մասնավոր հատվածի ներկայացուցիչների հետ հաղորդակցության և համագործակցության նոր մեխանիզմներ,
 - ձևավորել քաղաքացիական հասարակության ինստիտուտների հետ քննարկումների և հետադարձ կապի ապահովման մշակույթ,
 - ներդնել որոշումների կայացման գործընթացում հանրային բանավեճերի կազմակերպման, հասարակության ու գործարար շրջանակների ներկայացուցիչների ներգրավման թափանցիկ համակարգ,
 - բարձրացնել նախարարության հաշվետվողականության մակարդակը:
2. Նախարարության կողմից բարձրորակ ծառայությունների մատուցում, որը ենթադրում է
- ապահովել արդիական տեղեկատվական տեխնոլոգիաների համատարած կիրառումը,
 - հստակ սահմանել ստորաբաժանումների գործառույթները և դրանց ներքո վերաբաշխել աշխատակիցների լիազորությունները,
 - որդեգրել հասարակական կազմակերպությունների միջոցով նախարարության գործունեության վերաբերյալ սպառողների շրջանում պարբերաբար հարցումների կազմակերպման գործելակերպ,

- ներդնել ներքին և արտաքին աուդիտ:

3. Տարածքային զարգացման անհամաչափությունների նվազեցում հետևյալ միջոցներով.

- ապահովել տնտեսության ներկա մակարդակին և զարգացման միտումներին համապատասխան փոքր ու միջին գործարարության սուբյեկտների դասակարգման վերանայման գործընթացը և դրա ներքո՝

ա) տարանջատել ՓՄՁ և միկրո սուբյեկտները, ընդլայնել պետական աջակցության ծրագրերի շրջանակները,

բ) նպաստել սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերում սկսնակ գործարարներին միկրովարկերի տրամադրման գործընթացի աշխուժացմանը,

- խթանել արդյունաբերական կլաստերների ձևավորումը և կայացումը,
- խթանել տարածքներում ոչ գյուղատնտեսական աշխատատեղերի ստեղծումը՝ ծառայությունների (այդ թվում նաև ֆինանսական) ոլորտի զարգացման միջոցով,
- իրականացնել պետական-մասնավոր համագործակցության տարածքային խոշոր ծրագրեր,
- աջակցել տարածքներում ծառայությունների հասանելիության մակարդակի բարձրացմանը,

- ապահովել մարզերում ինովացիոն համակարգերի ձևավորում (տեխնոպարկեր, բիզնես ինկուբատորներ, արդյունաբերական պարկեր՝ համապատասխան ենթակառուցվածքներով),
- մշակել և ձեռնարկել նպատակաուղղված քայլեր Երևան քաղաքից դուրս տեղեկատվական տեխնոլոգիաների քաղաքի հիմնման ուղղությամբ:

4. Միջազգային մակարդակով մրցունակ գործարար և առևտրային պայմանների ապահովում ձեռնարկելով հետևյալ քայլերը.

- առաջնորդել վարչարարական ընթացակարգերի պարզեցման և հստակեցման գործընթացը,
- աջակցել գործարար ենթակառուցվածքների զարգացման և կադրերի վերապատրաստման գործընթացներին,
- ապահովել պետություն-մասնավոր հատված համագործակցության գործուն համակարգի աշխատանքը,
- բացահայտել փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության արդի մեխանիզմները,
- ապահովել որակի հսկողության, ստանդարտացման, համապատասխանության հավաստման և սերտիֆիկացման համակարգերի լիարժեք համապատասխանությունը միջազգային չափանիշներին,

- ապահովել տնտեսության մեջ տեխնիկական անվտանգության և սպառողների շահերի պաշտպանության ժամանակակից համակարգերի ներդրումը:

5. Տեղեկատվական հասարակության կայացում.

- ապահովել ՏՏ ոլորտի զարգացման կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ զարգացման ծրագրային հենքը,
- իրականացնել հասարակության էլեկտրոնային գրագիտության բարձրացմանն ուղղված միջոցառումներ,
- քաջալերել ոլորտի միջազգային հեղինակավոր ընկերությունների մուտքը, բացահայտել համագործակցության նոր ոլորտներ,
- օժանդակել էլեկտրոնային միջոցներով բնակչությանը տարաբնույթ ծառայությունների (էլ-կրթություն, էլ-առողջապահություն, էլ-առևտուր և այլն) մատուցման և հասանելիության ապահովմանը,
- խրախուսել տնտեսության այլ ճյուղերում տեղեկատվական տեխնոլոգիաների գործիքների ներդրումը,
- աջակցել էլեկտրոնային կառավարման բարձր/միջազգային մակարդակի համակարգերի ներդրման ապահովմանը,
- իրականացնել տնտեսություն-գիտություն, գիտություն-համալսարաններ կապերի ընդլայնման խրախուսման միջոցառումներ:

6. Արդյունաբերության գլոբալ մրցունակության բարձրացում հետևյալ կերպ.

- խթանել տեխնոլոգիաների արդիականացման գործընթացները, նպաստել արտադրանքի վերամշակման խորացմանը,
- քաջալերել միջազգային ճանաչում և առաջատար կառավարման հմտություններ ունեցող, տեխնոլոգիաներ տարածող ընկերությունների (ներառյալ սփյուռքի հայ գործարարների) մուտքը,
- օժանդակել ներքին ռեսուրսների վերամշակման և օտարերկրյա ներդրումների հետ կապված մրցունակ արտադրությունների,
- նպաստել արդյունաբերությունում արտադրողականության բարձրացմանը՝ խրախուսելով տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ներդրումը,
- կատարելագործել փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մեխանիզմները՝ հիմքում դնելով ծրագրային մոտեցումներ՝ ըստ զարգացման առաջնահերթությունների,
- աջակցել կապիտալի շուկայի զարգացմանն ու կորպորատիվ կառավարման մշակույթի արմատավորմանը:

7. Բարձրարժեք ծառայություններ մատուցող ոլորտների զարգացում, մասնավերապես, նպաստելով միջազգային մակարդակով մրցունակ ֆինանսական միջնորդությունների

ընդլայնմանը և յուրահատուկ բժշկական ծառայությունների զարգացմանը:

8. Գիտելիքի վրա հիմնված տնտեսության ենթակառուցվածքների ձևավորում հետևյալ քայլերի միջոցով.

- ձևակերպել գիտելիքահենք տնտեսության սկզբունքները և նկարագրել համապատասխան ենթակառուցվածքների համակարգը,
- սահմանել գիտական արդյունքի առևտրայնացման ինստիտուցիոնալ հիմքերը,
- աջակցել վեճուրային հիմնադրամների ստեղծմանն ու կայացմանը՝ նախաձեռնելով առնվազն մեկ վեճուրային հիմնադրամի ստեղծում,
- աջակցել բիզնես դպրոցների ձևավորմանն ու դրանցում արդի ուսումնական ծրագրերի իրականացմանը (պրոֆեսիոնալ հաշվապահական, ֆինանսական կառավարման և այլն):

ՀՀ Կառավարությունը, 2008թ. ապրիլի 28-ին հաստատված ծրագրում, երկրի տնտեսական զարգացման առումով կարևորագույն խնդիր է համարում Հայաստանի՝ որպես ներդրումների, գործարարության և զբոսաշրջության համար բարենպաստ և անվտանգ միջավայրի ձեւավորումը, միջազգային վարկի ձևավորումը, գործարար միջավայրի շարունակական բարելավումը, ներդրումների ներգրավման ակտիվ քաղաքականությունը, ազատ մրցակցության, նոր տեխնոլոգիաների ներդրման և աշխատանքի

արտադրողականության աճի խրախուսումը, ֆինանսական միջնորդության էական ավելացումը, ապրանքների և ծառայությունների արտահանման ծավալների, աշխարհագրության և անվանացանկի բազմազանության աճի խրախուսումը, նորամուծական համակարգի ենթակառուցվածքների և տեղեկատվական հասարակության ձևավորումը:

Վերը նշված դրույթներից ելնելով, ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 7-ի «Հայաստանի Հանրապետության հարկային վարչարարության ռազմավարության 2008-2011 թվականների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 941-Ն որոշման համաձայն, ներկայումս իրականացվում է հարկային բարեփոխումների ծրագիրը: Այն ունի սահմանված 7 նպատակ և դրանց կենսագործման համար նախատեսված 109 միջոցառում:

Գործարար հանրության մտահոգության առարկա հիմնախնդիրների մի մասը լուծում է ստացել 2008թ. օգոստոսի 21-ին ընդունված օրենսդրական փաթեթում: Մասնավորապես, փոքր և միջին ձեռնարկատիրության համար իրականացված միջոցառումները հետևյալն են.

1. Սահմանվել է հարկային հաշվետվությունների ավելի ցածր վարչարարական բեռ:
2. Ընդունվել է «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքը:
3. Մասնագիտացված կազմակերպությունների միջոցով ՓՄՁ-ներին հաշվապահական ծառայությունների

մատուցման նպատակով բացվել է «Հաշվապահական ծառայությունների կենտրոն»:

4. Օրենքով սահմանվել է «հարկային հաշվառման հատուկ կանոնակարգ», որի համաձայն մինչև 100 մլն դրամ տարեկան շրջանառություն ունեցող տնտեսվարող սուբյեկտները հաշվապահական միջազգային ստանդարտների միջոցով հաշվառման փոխարեն կարող են վարել պարզ հաշվառում:
5. Իրականացվել է հաշիվ-ապրանքագրերի ու այլ տեսակի սկզբնական փաստաթղթերի տեսակների, ձևաթղթերի «գույքագրում» և դրանց օպտիմալացում:

Հարկային և մաքսային վարչարարության կատարելագործման նպատակով իրականացվել են կառույցի կարողությունների զարգացմանն ուղղված մի շարք միջոցառումներ: Դրանց թվում են.

- ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեում (ՀՀ ԿԱ ՊԵԿ) ստեղծվել է «Հարկային և մաքսային վարչարարության կատարելագործման «Հասարակական խորհուրդ» խորհրդակցական մարմինը: «Հասարակական խորհրդի» հիմնական նպատակն է հարկային և մաքսային վարչարարության կատարելագործմանն ուղղված ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի և ՀՀ քաղաքացիների, կազմակերպությունների և հասարակական միավորումների հետ համագործակցության ապահովումը՝ թափանցիկության, հրապարակայնության, պետական


մարմինների և հասարակության շահերի հավասարակշռության սկզբունքների հիման վրա:

- Սահմանվել է հարկային ծառայության կողմից մշակված օրենսդրական և ընթացակարգային նախագծերի հասարակական քննարկումների պարտադիր ներկայացման ընթացակարգ:
- ՀՀ ԿԱ ՊԵԿ համակարգում սահմանվել է «Քեժ գիծ», որն արդեն գործում է:


ՓՈՔԲ ԵՎ ՄԻՋԻՆ ՉԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՎԱՂՎԱ ՕՐԸ

Համաձայն Համաշխարհային Բանկի «Գործարարությամբ զբաղվելը» դասակարգման 2009թ. հաշվետվության, որը հետազոտված 181 երկրների տնտեսությունները գնահատում է ըստ այն ցուցանիշների, որոնք ուղղակիորեն ազդում են գործարար միջավայրի որակի և տնտեսական աճի վրա, Հայաստանը զբաղեցրել է 44-րդ տեղը՝ նախորդ տարվա համեմատ իջեցնելով իր վարկանիշը 41-րդից: Նշենք, որ 2009թ. հաշվետվությունն ընդգրկում է 2007թ. ապրիլից մինչև 2008թ. հունիսն ընկած ժամանակահատվածը, երբ համաշխարհային ճգնաժամը իրեն դեռ զգացնել չէր տվել: Համաշխարհային Բանկի «Գործարարությամբ զբաղվելը» դասակարգման համաձայն Հայաստանի զբաղեցրած դիրքը 2008-2009թթ. մի քանի այլ երկրների համեմատությամբ հետևյալն է.

2009 թ.



2008 թ.



ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունը 2008թ. մշակել և գործողության մեջ է դրել «Հայաստանի գործարար և ներդրումային միջավայրի «Գերազանցության կենտրոն» համազգային նախագիծ» հայեցակարգը, որում հռչակած տեսլականն է՝ «Հայաստանը պետք է դառնա գործարար և ներդրումային միջավայրի «ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» տարածաշրջանում լավագույն վայրը ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու, քիզնես սկսելու ու զարգացնելու համար: Հայաստանում քիզնես ունենալը պետք է լինի շահավետ, իսկ գործունեություն ծավալելու պայմանները՝ գրավիչ, ինչը, մասնավորապես, կնպաստի ագրեսիվորեն աճող ՓՄՁ կայացմանը և հարևան ու զարգացած երկրների շուկաներ ներխուժմանը»:

Ըստ Հայեցակարգի խնդիրների, որոնց լուծումը հնարավոր կդարձնի Հայաստանում ձեռնարկատիրական գործունեության օրենսդրական կարգավորման, ծառայությունների և ընթացակարգերի պարզ, թափանցիկ և քիչ ծախսատար միջավայրի, հավասար մրցակցային պայմանների, գործարարությանը օժանդակող զարգացած շուկայական և ֆիզիկական ենթակառուցվածքների, տնտեսության կարիքները բավարարող կրթական համակարգի ձևավորումը, հետևյալն են.

- գործարար և ներդրումային միջավայրի բարելավում և զարգացում,
- տնտեսության ազատականացում,
- ազատ մրցակցության խթանում,

- վարչարարական ընթացակարգերի պարզեցում,
- հարկային և մաքսային՝ ֆիսկալ հավասարակշռված քաղաքականության իրականացում,
- միջազգային չափանիշներին համապատասխանող մասնագետների պատրաստում:

Հայեցակարգում ներկայացված են նաև առաջարկություններ այնպիսի բարեփոխումների ուղղությամբ, որոնք հնարավոր է իրականացնել կարճաժամկետ հեռանկարում՝ մեկ ու կես տարվա ընթացքում: Հայաստանի Հանրապետության կառավարությունն ընդունում է առկա մարտահրավերը և ունի կամք ու հնարավորություն արագ իրականացնելու առաջարկվող բարեփոխումները:

Համաշխարհային Բանկի «Գործարարությամբ զբաղվելը» ծրագրի աշխատանքային խումբը առաջարկել է Հայեցակարգը մշակելիս հաշվի առնել արագ բարեփոխումներ իրականացնելու ստորև բերված մոտեցումները.

- Սկսել պարզ վարչարարական բարեփոխումներից, որոնք չեն պահանջում օրենսդրական փոփոխություններ:
- Կրճատել վարչական ընթացակարգերը՝ նվազագույնի հասցնելով գործարար-պետական պաշտոնյա շփումները:
- Ներդնել ստանդարտ ձևաթղթեր:
- Ապահովել գործող օրենսդրության վերաբերյալ բիզնես հանրության իրազեկվածությունը:

- Կատարելագործել վարչարարությունը:

Նշված մոտեցումներին համահունչ են ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի հետագա գործունեության ծրագրերի մեջ ներառված հետևյալ նախաձեռնությունները, միջոցառումներն ու աշխատանքները.

- Հարկ վճարողների սպասարկման հայեցակարգի մշակում:
- Հարկային և մաքսային օրենքների կիրառման մասին տեղեկատվության, պարզաբանումների և մեկնաբանությունների տրամադրման մեխանիզմների հայեցակարգի մշակում:
- Հարկային միջնորդների ինստիտուտի ձևավորման հայեցակարգի մշակում:
- Ռ-իսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգի գործարկման նախապատրաստում:

Ներկայումս մշակման փուլում է գտնվում ՀՀ Հարկային օրենսգիրքը, որը կոչված է ապահովել երկրի տնտեսական զարգացման քաղաքականության հետ ներդաշնակ, միասնական, համախմբված և հակասություններից զուրկ օրենսդրական դաշտ:

2009թ. ապրիլի սկզբին ՀՀ Էկոնոմիկայի նախարարության տնտեսական քաղաքականության և ռազմավարության մշակման վարչության պետ պրն. Ա.Բաղդասարյանը ՓՄՁ սուբյեկտների, գործարարների շահերը պաշտպանող միավորումների ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ ներկայացրեց ՀՀ Կառավարության հայեցակարգն ու ծրագրերը, որոնք նպատակ

ունենն նպաստել երկրում ՓՄՁ ոլորտի զարգացմանը և մեղմել ներկայիս ֆինանսա-տնտեսական ճգնաժամի ոլորտի վրա հնարավոր բացասական ազդեցությունը: Դրանք են.

- Տեղական, օտարերկրյա և վարկային միջոցների ներգրավում և ներդրում ենթակառուցվածքների՝ ճանապարհների, ջրանցքների կառուցման և զարգացման մեջ:
- Ուղղակի աջակցություն գիտա-տեխնիկական ուղղվածություն ունեցող խոցելի ձեռնարկություններին:
- ՓՄՁ-ների մատչելի պայմաններով վարկավորման խթանում:
- ՓՄՁ-ների գործունեության համար նպաստավոր օրենսդրական դաշտի ձևավորում:

Այս առումով նշվեց, որ Էկոնոմիկայի նախարարությունը արդեն մշակել և շրջանառության մեջ է դրել «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրինագիծը, որի համաձայն ՓՄՁ սուբյեկտները դասակարգվում են ելնելով միաժամանակ աշխատողների թվաքանակից և շրջանառության ծավալից, ինչը համահունչ է Եվրամիության երկրներում գործող դասակարգման սկզբունքներին:

Քննարկման մասնակիցները ներկայացրեցին իրենց տեսակետները Կառավարության ծրագրերի վերաբերյալ և հանդես եկան տնտեսական ակտիվությունը խթանող և ճգնաժամի ազդեցությունը մեղմելուն ուղղված մի շարք առաջարկություններով.

- Ստուգումների ժամանակավոր մորատորիում:

- Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության մշակույթի ներդրման խթանում:
- Հարկային ռեժիմի տարածքային դիվերսիֆիկացիա:
- Նմանատիպ խնդիրներ ունեցող հարևան պետությունների հետ համագործակցության նոր ձևաչափերի ձևավորում:
- Կառավարության հետ զուգահեռ գործող հանրային տեղեկատվական-վերլուծական շտաբի ստեղծում:
- Պետական աջակցության ծրագրերի վերաբերյալ բացարձակ թափանցիկության ապահովում:
- Ներդրումների նկատմամբ օպերատիվ շահագրգիռ հոգածություն:
- Արտահանման հստակ և գործնական խթանում:
- Սկզբից գործարարության ծավալումն ու աշխուժացումը խթանող և հետո միայն խստացումներ նախատեսող քաղաքականություն՝ «սկզբից տալ, հետո միայն պահանջել» սկզբունքի համաձայն:
- «Կտրուկ շրջադարձ ներմուծումից դեպի արտահանում» գործընթացի խթանում:
- Գիտատար և նորարարական ճյուղերի զարգացմանն ուղղված պետության գործնական աջակցություն:
- Որոշակի ժամկետով թույլատրելի շահույթի նորմի սահմանում:

- Հարկային բեռի թեթևացում, գույքորդելով այն հարկերից խուսափելու համար պատժի խստացման հետ:
- Վարչարարության ոլորտում կոռուպցիայի նվազեցում:
- Հարկային կարգապահության ապահովման խնդրի լուծման մեջ ոլորտային հասարակական կառույցների ներգրավում:
- Հստակ ուղղվածության նպատակային հետազոտական աշխատանքների խթանում:
- Աջակցություն ընտրված ոլորտներին, այլ ոչ թե ձեռնարկություններին:
- Ենթակառուցվածքների խիստ նպատակային զարգացում:
- Սպառման խթանման նպատակով մատչելի պայմաններով վարկավորման մեխանիզմների ներդրում:
- Պետության կողմից գների և մենաշնորհների գործունեության խիստ կանոնակարգում:
- Ջրաղվածության ապահովման նպատակով աշխատատար արդյունաբերության ճյուղերի զարգացում:
- Ջարգացման հնարավոր ուղղություններով ուսումնասիրություն կատարող փորձագետների խմբի ձևավորում:
- Ոլորտին կցված հարկային տեսուչի ինստիտուտի ձևավորում:
- Ձեռնարկության աշխատանքի արդյունքի գնահատում՝ ոլորտի զարգացման մասին վկայող տվյալներից ելնելով:

- Հողի և գույքահարկի փոխարեն պրոգրեսիվ մեխանիզմով գանձվող անշարժ գույքի հարկի սահմանում:

Տնտեսվարողների համար հավասար մրցակցային պայմանների, ստվերային տնտեսության ծավալները և կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու, հետագա տնտեսական զարգացման համար նպաստավոր պայմաններ ստեղծելու առումով առաջնային խնդիր է համարվում տնտեսության մեջ ապրանքների մատակարարման, ծառայությունների մատուցման և աշխատանքների կատարման գործարքների փաստաթղթավորումը և փաստաթղթաշրջանառությունը: ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի պատվերով «Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» (ՓՄՁ ՋԱԿ) հիմնադրամի կողմից իրականացված «Հայաստանի տնտեսությունում փաստաթղթաշրջանառության խնդիրները» հետազոտության արդյունքում վեր են հանվել մի շարք խորքային հիմնախնդիրներ, որոնցով պայմանավորված՝ կատարվող ապրանքների և/կամ ծառայությունների ձեռք բերման գործարքների էական տոկոսը (20%) կատարվում է առանց փաստաթղթավորման:

Ստորև ներկայացված են հետազոտության արդյունքները և դրանց վերլուծության հիման վրա առկա որոշ հիմնախնդիրների լուծմանն ուղղված և օրենսդրական փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկությունները:

Ըստ հետազոտության հեղինակների, փաստաթղթավորմանն ու փաստաթղթաշրջանառությանը ներկայացվող տեխնիկական պահանջների բարդությունը բերում է նրան, որ տնտեսվարող սուբյեկտները պարզապես հրաժարվում են տվյալ փաստաթղթով

նկարագրվող տնտեսական իրադարձությունը
փաստաթղթավորելուց և, հետրաբար, հաշվառելուց:

Հեղինակները եզրակացնում են, որ տարբեր պատճառներով պայմանավորված փաստաթղթավորման բարդությունները հաճախ բերում են տնտեսվարող սուբյեկտների կողմից բարդ փաստաթղթավորում պահանջող տնտեսական իրադարձությունների գրանցումից հրաժարվելուն, ինչի հետևանքով տնտեսվարող սուբյեկտների մոտ առաջանում է իրականում կատարված ծախսերի թերգրանցում, այսինքն տնտեսվարող սուբյեկտները մեծամասնությամբ փորձում են թաքցնել տվյալ ծախսերին համապատասխան շրջանառության ծավալը:

Կազմակերպություններում և անհատ ձեռնարկատերերի մոտ որոշ ապրանքների և ծառայությունների ձեռքբերումների զգալի մասը կատարվում է առանց փաստաթղթավորման, քանի որ տնտեսությունում առկա են լայն կիրառություն ունեցող ապրանքատեսակներ, որոնց ձեռքբերումը հնարավոր է կատարել կամ առանց փաստաթղթի կամ էլ մասնակի փաստաթղթավորմամբ: Արդյունքում տվյալ տեսակի ապրանքները վերամշակող և վերավաճառող տնտեսվարող սուբյեկտները կանգնած են հարկային գերբեռնվածության առջև և իրենց հերթին ձգտում են թաքցնել շրջանառությունը տվյալ մասով:

Հետազոտության հեղինակների առաջարկած բարեփոխումները և միջոցառումները, որոնք կարելի է իրականացնել վերը թվարկված խոչընդոտները վերացնելու ուղղությամբ ներառում են.

- առաջնային փաստաթղթերի մասով սահմանել պարտադիր, կամ ուղղորդող բնույթի տիպային ձևաթղթեր,

- պարզեցնել առաջնային փաստաթղթերի լրացման պահանջները,

- մմանատիպ տնտեսական իրադարձություններ նկարագրող առաջնային փաստաթղթերը համակցել մեկ առաջնային փաստաթղթով,

- սահմանել հստակ մեխանիզմներ, իրացման շրջանառությունը փաստաթղթավորելու ցանկություն ունեցող արտադրող և մեծածախ առևտուր իրականացնող տնտեսվարող սուբյեկտների համար:

Արձագանքելով այդ մտահոգություններին, ՀՀ ՊԵԿ-ի կառավարությանը ներկայացրած հարկային փոփոխությունների նոր փաթեթը փոքր և միջին բիզնեսի նկատմամբ փաստաթղթային հիմնավորում չունենալու դեպքում նախատեսում է նախկինում կիրառվող տուգանքի կասեցումը 2 տարով և դրա դիմաց 10 տոկոս հարկի վճարումը որպես ծախս ճանաչելը: Փոխարենը, փաստաթղթեր տրամադրելու առումով առավել ռիսկային մի քանի տասնյակ խոշոր ընկերություններում ներմուծվում է հարկային ներկայացուցիչների ինստիտուտը:

Հարկային ներկայացուցիչները հետևելու են այդ ընկերություններից ապրանքների բացթողմանը և փաստաթղթերի տրամադրմանը: Այս նորամուծության հեղինակների կարծիքով խոշորների մոտ ստվերը կնվազի, բայց թե որքանո՞վ, ցույց կտա փորձը:

Ավելացված արժեքի հարկ վճարողների համար սահմանվում են հատուկ հարկային հաշիվներ, որոնք հնարավորություն կտան հարկային հաշվետվություն տալիս նվազեցնել թղթաբանությունը: Նման հատուկ հարկային հաշիվների ներդրումը կնվազեցնի ավելացված արժեքի հարկի ետ վերադարձման համար ակնհայտ կեղծ փաստաթղթերի ներկայացման հնարավորությունը: Արդյունքում պետությունը 2010թ.-ից պարտավորվում է չունենալ ավելացված արժեքի հարկի ետ վերադարձման ուշացումներ, իսկ հակառակ պարագայում՝ մասնավորին տուգանքներ վճարել:

Փոքր և միջին բիզնեսի համար առաջարկվող փոփոխությունները կառավարությունը որակում է որպես հակաճգնաժամային քայլ, իսկ խոշոր բիզնեսին ուղղված խստացումները կոչված են խոշոր բիզնեսի կողմից հարկային պարտավորությունների կատարման վերաբերյալ հանրությանը վստահություն ներշնչելուն:

«Հայաստանի գործարար և ներդրումային միջավայրի «Գերազանցության կենտրոն» համազգային նախագիծ» հայեցակարգի հեղինակների կարծիքով Հայաստանի Հանրապետությունը տարածաշրջանի երկրների նկատմամբ պետք է ունենա մի շարք համեմատական առավելություններ, որոնք լրացուցիչ ազդակ կհանդիսանան Հայաստանը գործարարության և ներդրումային միջավայրի գերազանցության կենտրոն դարձնելու համար: Հայաստանի հարաբերական առավելությունները առաջիկա տարիներին կխթանեն երկիր մտնող օտարերկրյա ներդրումները և կնպաստեն համաշխարհային շուկաներում

մրցունակ տնտեսության ձևավորմանը: Այդ առավելությունները հետևյալն են.

- պարզ մաքսային սակագնային քաղաքականություն,
- կապիտալի ազատ շրջանառման հնարավորություն և օտարերկրացիների կողմից Հայաստանում 100 տոկոսով սեփականության տիրապետման իրավունք,
- առևտրային կարևորագույն կապող հանգույց դառնալու հնարավորություն:

Հայաստանում «Գործարարությամբ զբաղվելը» հենանիշերի համաձայն հաջողություններ արձանագրելու, գործարար միջավայրի բարելավման արդյունքները տնտեսության զարգացման աստիճանի առումով նկատելի դարձնելու համար, անհրաժեշտ է ապահովել հնարավորինս ներդաշնակ, ընկալելի և թափանցիկ օրենսդրական դաշտ: Նույն չափով կարևոր է օրենքների լիարժեք կիրարկումը:

Անհրաժեշտ է ապահովել ինստիտուցիոնալ կառույցների արդյունավետ աշխատանքը: Իսկ պետական կառավարման համակարգի եւ գործարար հանրության փոխվստահության մթնոլորտում կառուցողական համագործակցության կարևորությունը դժվար է գերազնահատել:

Այդ ճանապարհին, որպես ռիսկային գործոն, հանդես է գալիս վարչարարության պարզեցման և ազատական կարգավորման ընդլայնման արդյունքում գործարար համայնքի որոշակի հատվածի կողմից չարաշահումների հնարավորությունը: Նման ռիսկը

նվազագույնի հասցնելու և սպառողների շահերի պաշտպանության ժամանակակից համակարգ ներդնելու նպատակով Հայաստանը պետք է անցում կատարի դեպի Եվրոպական ստանդարտների ուղղակի կիրառմանը: Օրինակ՝ որակի համապատասխանության հսկողության համակարգը պետք է զուտ ստուգող բնույթից անցում կատարի դեպի որակի իրական չափանիշների կիրառում և դրանց ապահովումն երաշխավորող ծառայությունների մատուցում: Պետք է զուգահեռաբար ընդլայնվի հետմաքսային ռիսկի վրա հիմնված հարկային աուդիտի կիրառումը, բարձրացվի դրանց արդյունավետության աստիճանը:

Վ Ե Ր Ջ Ա Բ Ա Ն

Ամեն հայի երազանքն է Հայաստանը տեսնել որպես հզոր, զարգացած, հարուստ, կայուն զարգացող տնտեսությամբ մրցունակ պետություն, ամենագրավիչ երկրներից մեկը աշխարհում՝ ինչպես գործարարությամբ զբաղվելու, այնպես էլ ապրելու և աշխատելու համար, ուր համակողմանիորեն պաշտպանվում են և՛ գործարարների, և՛ սպառողների իրավունքներն ու շահերը:

Հայաստանում յուրաքանչյուր մարդու և քաղաքացու համար ապահովված կենսապայմանների բարձր մակարդակ ապահովելու նպատակով անհրաժեշտ է ստեղծել արդյունավետ և թափանցիկ, բաց քննարկումների և բանավեճերի միջոցով հասարակության և մասնավոր հատվածի միջև հետադարձ կապը ապահովող կառավարման համակարգ, ձևավորել տնտեսության կայուն և համաչափ զարգացման, արտադրողականության աճի համար բարենպաստ մրցակցային միջավայր, ստեղծել գործարար և ներդրումային բարենպաստ մթնոլորտ, աջակցել հաջողված և պաշտպանված գործարարությանը, ապահովել պետություն-մասնավոր հատված կառուցողական համագործակցություն՝ սոցիալական գործընկերության կատարյալ համակարգ ձևավորելու միջոցով, երկրի մրցունակության բարձրացմանը զուգընթաց ապահովել Հայաստանի ինտեգրումը համաաշխարհային տնտեսությանը, մշակել և իրականացնել երկրի արդյունաբերական նկարագրի ձևավորմանն ու ամրապնդմանն ուղղված դիվերսիֆիկացված արդյունաբերական քաղաքականություն՝ տնտեսության գերակա ոլորտների զարգացման միջոցով, նպաստել

դեպի ռեսուրսախնայող և գիտատար տնտեսություն
փոխակերպմանը:

Այս ճանապարհին հասարակության բոլոր հատվածները
կառուցողական ներդրում ունենալու խնդիր ունեն: ՕՆՀԱ-ն
շարունակելու է ուշադրության կենտրոնում պահել երկրում
իրականացվող տնտեսական բարեփոխումների ընթացքը և հուսով է,
որ իր վրա վերցնելով գործընթացի վերահսկման խնդիրը, այդ կերպ
իր լուծման կունենա երկրի տնտեսական առաջընթացի մեջ:

Հ Ա Ր Ց Ա Շ Ա Ր

1. Խնդրում ենք գնահատել երկրում մասնավոր ձեռնարկատիրության զարգացման աստիճանը:

բավարար է բավարար չէ տեղյակ չեմ

2. Որքանով են պետական կառավարման մարմիններն օժանդակում Ձեր ձեռնարկության գործունեությանը:

շատ են օգնում որոշ չափով օգնում են անտարբեր են
 չեն օգնում խանգարում են

3. Ինչպե՞ս եք գնահատում կառավարման մարմինների ծառայությունների մատուցման արդյունավետությունը:

արդյունավետ անարդյունավետ տեղյակ չեմ

4. Ձեր կարծիքով, ձեռնարկությունների ո՞ր տոկոսն է օգտագործում “տանիք” պետական հարկերի, կանոնակարգերի և վարչարարության հետ առնչվող խնդիրները լուծելու համար: ----- %

5. Ինչպե՞ս եք գնահատում հետևյալ խնդիրները (1 – խնդիր չէ, 2 - փոքր խնդիր է, 3 – միջին խնդիր է, 4 – մեծ խնդիր է, 0 – չգիտեմ):

ա.	Տնտեսական բարեփոխումների իրականացման ընթացքը	(1)	(2)	(3)	(4)	(0)
բ.	Գործարարության կանոնակարգումը և վարչարարությունը	(1)	(2)	(3)	(4)	(0)

գ.	Հարկերը և հարկային վարչարարությունը	(1)	(2)	(3)	(4)	(0)
դ.	Արդարադատության համակարգի գործունեությունը	(1)	(2)	(3)	(4)	(0)
ե.	Ոչ մրցակցային գործունեությունը պետական կամ մասնավոր ձեռնարկությունների կողմից	(1)	(2)	(3)	(4)	(0)
զ.	Կոռուպցիան	(1)	(2)	(3)	(4)	(0)
է.	Ենթակառուցվածքները (հեռախոս, էլեկտր., ջուր, ճանապարհներ)	(1)	(2)	(3)	(4)	(0)
ը.	Ֆինանսավորումը	(1)	(2)	(3)	(4)	(0)
թ.	Գների անկայունությունը, արժեզրկումը	(1)	(2)	(3)	(4)	(0)
ժ.	Արժույթի փոխարժեքի տատանումները	(1)	(2)	(3)	(4)	(0)

6. Ըստ Ձեզ, որո՞նք են երկրում մասնավոր ձեռնարկատիրության զարգացման հիմնական խոչընդոտները:

- Ձեռնարկության հիմնադրման կարգը
- Սեփականատիրական իրավունքի պաշտպանված չլինելը
- Հարկային բեռը, բարդ հարկային համակարգը
- Թույլությունների և լիցենզիաների ստացման կարգը
- Կոռուպցիան պետական հատվածում
- Վարկերի դժվար մատչելիությունը
- Անբավարար պետական աջակցությունը

Օրենսդրության հաճախակի և անհետևողական փոփոխությունները

Գատախրավական համակարգի անկատարությունը

Վարչարարական չարաշահումները

7. Ի՞նչպես կգնահատեք երկրում ՓՄՁ ոլորտում բարեփոխումների իրականացման անհրաժեշտությունը:

խիստ անհրաժեշտ է անհրաժեշտ է անհրաժեշտ չէ

8. Ակնկալում ե՞ք արդյոք տնտեսական բարեփոխումների խթանում նորընտիր նախագահի կողմից:

այո ոչ չգիտեմ

9. Ըստ կարևորության դասակարգեք ստորև բերված ոլորտային բարեփոխումները, որոնց իրականացումը, Ձեր կարծիքով առաջնահերթ պիտի լինի նորընտիր նախագահի համար (1 - ամենակարևորն է, 6 - նվազ կարևոր).

տնտեսական օրենսդրության կատարելագործում

վարչարարության կատարելագործմանն ուղղված բարեփոխումներ

հարկային և մաքսային բարեփոխումներ

ֆինանսավարկային համակարգի բարեփոխումներ

արդար մրցակցային դաշտի ապահովում

կոռուպցիայի դեմ պայքար

ինովացիոն քաղաքականության մշակում և իրականացում

ներդրումային քաղաքականության խթանում

համայնքների տնտեսական զարգացում

10. Այլ առաջարկություններ և դիտարկումներ:

.....

ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծի պող. 4

Հեռ./ Ֆաքս (374 10) 525 082

Էլ. փոստ. info@afic.am

Ինտերնետային կայք. www.afic.am